

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

Հիմնաբառեր – ագրարային ոլորտ, ցուցիչ, ընդհանրական ինդեքս, տարածաշրջան, գնահատական, սոցիալական կայունություն, կայուն զարգացում, տնտեսական կայունություն, էկոլոգիական կայունություն:

Հոդվածը նվիրված է տարածաշրջանային ագրարային ոլորտի կայուն զարգացման գնահատման մեթոդիկային: Հոդվածում սահմանվել են տարածաշրջանի ագրարային ոլորտի կայուն զարգացումը բնութագրող ցուցիչները և գնահատման փուլերը: Ներկայացվել է նաև կայուն զարգացման ընդհանրական ցուցանիշի կառուցման մեթոդիկան: Հոդվածում սահմանվել են տարածաշրջանային ագրարային ոլորտի ընդհանրական ինդեքսի շեմային նշանակությունները:

Մարդկության հասարակության ողջ ընթացքում ագրարային ոլորտը հանդիսանում է նյութական արտադրության ճյուղի հենքը և որոշում է բնակչության գերակշիռ մասի կյանքի պատկերը: Ագրարային ոլորտի զարգացման մակարդակից է կաժված երկիր մոլորակի բնակչության կյանքը:

Տարածաշրջանի (մարզի կամ երկրամասի) ագրարային ոլորտը անհրաժեշտ է դիտարկել որպես տարածքային կազմավորումներ՝ իրենից ներկայացնելով ամբողջական բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական համակարգ, որում իրականացվում է իրեն հատուկ աշխատանքի միջտարածաշրջանային բաժանմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և շրջական միջավայրի պաշտպանությանը համապատասխան գյուղատնտեսական արտադրանքի հավասարակշիռ վերարտադրություն, ինչն էլ նախապայմաններ է ստեղծում բնակչության նորմալ աճի համար:

Ագրարային ոլորտի կայուն զարգացման չափման և գնահատման հիմնախնդիրը հանդիսանում է խիստ արդիական, հատկապես համաշխարհային տնտեսական ձգնաժամի հետևանքների հաղթահարման պայմաններում: Կայուն զարգացումն ենթադրում է բազմաբովանդակ և որոշ դեպքերում՝ մարդու կենսագործունեության միջավայրի որակի պահպանման պարագայում, տնտեսական աճին հակասող խնդիրների միաժամանակյա լուծում:

Ներկայումս մի շարք գիտնականների (Վ. Գ. Գարկով, Ա. Ն. Իստոշին, Տ. Վ. Ուսկովա և այլք) կողմից փորձեր են արվում կայուն զարգացման չափման և գնահատման մեթոդաբանության ստեղծման ուղղությամբ, որոնցում հաշվի են առնվում ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական և էկոլոգիական գործոնների ազդեցությունը:

Մեթոդիկայի ստեղծման ժամանակ պահպանվել են հետևյալ պահանջները.

- Ցուցանիշների համակարգը պետք է ընդգրկի ագրարային ոլորտի բոլոր բաղկացուցիչները. տնտեսական, սոցիալական և էկոլոգիական,
- Ցուցանիշների թիվը պետք է լինի սահմանափակ,
- Ցուցանիշները պետք է լինեն համադրելի,
- Գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է լինի հասանելի,
- Ցուցանիշները պետք բերվեն մեկ միասնականության, որպեսզի ապահովվեն տարածաշրջանների կայունության գնահատման համադրելիությունը,
- Տարածաշրջանի ագրարային ոլորտի կայուն զարգացման ընդհանրական (ինտեգրալ) գնահատականի մեկնաբանության համար անհրաժեշտ է սահմանել շեմային նշանակություններ:

Տարածաշրջանային ագրարային ոլորտի կայուն զարգացման գնահատման մեթոդաբանությունը պետք է ներառի հետևյալ փուլերը.

Առաջին փուլ՝ ցուցիչների կազմի հիմնավորում: Կայուն զարգացման ցուցիչները այնպիսի ցուցանիշներ են, որոնք բնութագրում են որոշակի ժամանակի ընթացքում սոցիալական ոլորտի, շրջակա միջավայրի և վերջապես տնտեսության վիճակի փոփոխությունները: Ջանքեր գործադրելով մարդկանց կյանքի որակի բարձրացման համար և հասարակությունն առավել կայուն դարձնելով, անհրաժեշտ է հավասարակշռություն գտնել սոցիալական պահանջմունքների, տնտեսական խնդիրների և շրջակա միջավայրի հնարավորությունների միջև: Գործնականում շատ դժվար է գտնել այդ հավասարակշռությունը: Ցուցիչները թույլ են տալիս որոշել այս կամ այն ոլորտի փոփոխության միտումները և դրանով իսկ նախանշելով հետագա գործունեության հնարավոր ուղիները:

Ցուցիչները զարգացման հիմնախնդիրների չափման և վերլուծության կարևոր գործիք են: Դրանք բնութագրում են հիմնախնդրի քանակական և որակական կողմերը և թույլ են տալիս գնահատել

իրավիճակը՝ դրական կամ բացասական փոփոխություններով հանդերձ:

Կայուն զարգացման ցուցիչների մշակման համաշխարհային փորձի ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնել երկու մոտեցում¹:

1. Ցուցիչների համակարգի կառուցում, որոնցից յուրաքանչ-յուրը արտացոլում է կայուն զարգացման առանձին կողմերը՝ էկոլոգիական, տնտեսական, սոցիալական, ինստիտուցիոնալ:

2. Ընդհանրական ցուցիչի կառուցում, որի հիման վրա կարելի է դատել սոցիալ-տնտեսական զարգացման կայունության աստիճանի մասին: Ընդհանրական ցուցիչը որպես կանոն կառուցվում է հետևյալ խումբ ցուցանիշների հիման վրա՝ էկոլոգո-տնտեսական, էկոլոգո-սոցիալական և էկոլոգիական:

Մեթոդաբանական խնդիրների պատճառով, կապված մեծ քանակի ցուցանիշների համադրելիության ապահովման հետ, առայսօր գոյություն չունի համընդհանուր ձևանշման արժանացած ընդհանրական ցուցիչ: Ցուցանիշների համակարգի կառուցման մոտեցումն ունի առավել լայն տարածում: Ցուցանիշների միջազգային համակարգերը բաղկացած են առավելապես ապախոշորացված (չազդեգատացված) ցուցանիշներից ըստ զարգացման առանձին ոլորտների և ըստ առանձին հիմնախնդիրների, ինչպիսիք են՝ եկամուտների անհավասարությունը, գործազրկությունը, կրթությունը, բժշկական ծառայությունների մատչելիությունը և այլն: Ցուցանիշների համալիր համակարգի օգտագործումը անհրաժեշտ պայմանն է հանդիսանում կայուն զարգացման ցուցանիշների ազգային համակարգի ստեղծման հետ կապված աշխատանքների մեկնարկի համար: Հարկ է նշել, որ ցուցանիշներն ինքնին միշտ չէ, որ պատկերացում են տալիս տեղի ունեցող գործընթացների կայունության մասին: Պատասխանը կարելի է ստանալ միայն ստացված արդյունքների ճիշտ մեկնաբանումից հետո:

Տարածաշրջանի ազդարային ոլորտի կայուն զարգացման ցուցիչները չեն համարվում անփոփոխ և ոչ էլ մեկընդմիշտ սահմանված: Դրանք որոշվում են ելնելով ներքին գործոններից, որոնք բնութագրում են տարածաշրջանի ազդարային ոլորտի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական զարգացումը: Տարածաշրջանային ազդարային ոլորտի կայուն զարգացման ընդհանրական ցուցիչի հաշվարկման համար կարող են օգտագործվել հետևյալ ցուցանիշները (տես՝ աղյուսակ 1):

¹ Шимова О. С. Устойчивое развитие. Учеб. Пособие. Стр. 199, Минск 2010г.

Տարածաշրջանի ագրարային ոլորտի կայուն զարգացման գնահատման ցուցանիշների հավաքածու

Տնտեսական ցուցանիշներ	Սոցիալական ցուցանիշներ	Էկոլոգիական ցուցանիշներ
<ul style="list-style-type: none"> - Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալ, հազ. դրամ - Մեկ հեկտար գյուղատնտեսական հողերից արտադրանքի ծավալը, հազ. դրամ - Տարածաշրջանի ինքնաապահովումը գյուղատնտեսական արտադրանքով, % - Մեկ շնչի հաշվով հիմնական կապիտալում ներդրումների ծավալը, հազ. դրամ - Համախառն տարածքային արդյունքի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշիռը, % - Նորարարությամբ զբաղվող ագրարային ոլորտի կազմակերպությունների մասնաբաժինը, % - Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսությունում, հազ. դրամ - Հիմնական կապիտալի համալրման գործակից, - Շահութաբեր կազմակերպությունների տեսակարար կշիռը, % 	<ul style="list-style-type: none"> - տարածաշրջանի ամբողջ բնակչության մեջ գյուղական բնակչության տեսակարար կշիռը, % - բնակչության բնական հավելաձևը, մարդ - բնակչության մեխանիկական հավելաձի գործակից, - տնտեսապես ակտիվ բնակչության գործակից, % - Կենսաապահովման նվազագույն մեծությունից ցածր եկամուտ ունեցող բնակչության տեսակարար կշիռը ամբողջ բնակչության մեջ, % - Մեկ բնակչի հաշվով ընդհանուր բնակարանային մակերեսը, քառ. մետր, - ջրագծով ապահովված բնակարանային մակերեսի տեսակարար կշիռը ընդհանուր բնակարանային ֆոնդի մեջ, % - գյուղական բնակավայրերում հանրակրթական հիմնարկների թիվը. 1000 մարդու հաշվով, - գյուղական բնակավայրերում բուժհիմնարկների թիվը, 1000 մարդու հաշվով 	<ul style="list-style-type: none"> - Էռոզիայի ենթարկված հողերի տեսակարար կշիռը, % - հիդրենիկ նորմատիվներին չհամապատասխանող (ըստ սանիտարաքիմիական ցուցանիշների) ջրի հետազոտված փորձանմուշների տեսակարար կշիռը %, - հողի, ջրամբարների, ազատ օդի աղտոտման սահմանային թույլատրելի նորմերի գերազանցումների քանակը ըստ հիմնական աղտոտող նյութերի՝ փորձանմուշների ընդհանուր քանակի մեջ % , - չմշակվող հողերի մակերեսի տեսակարար կշիռը %

Երկրորդ փուլը՝ տարածաշրջանի ագրարային ոլորտի զարգացման աստիճանի գնահատում ըստ յուրաքանչյուր ցուցանիշի: Ցուցանիշների նշանակալիության և ըստ տարածաշրջանների տարբերակման աստիճանի հաշվարկման համար, ինչպես նաև զարգացման մակարդակի միասնական համալիր ցուցիչի հաշ-

վարկման համար նպատակահարմար է կիրառել հարաբերական տարբերությունների մեթոդը: Հարաբերական տարբերությունների մեթոդը ենթադրում է, որ մասնավոր ցուցանիշների գնահատման ժամանակ օգտագործվում են ոչ միայն տարածաշրջանների լավագույն ցուցանիշները, այլ նաև՝ վատթարագույնները: Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$K_i = \frac{x_i - x_{i\min}}{x_{i\max} - x_{i\min}}$$

որտեղ՝ K_i – ըստ i – ցուցանիշի տարածաշրջանի ագրարային ոլորտի զարգացման մակարդակի գնահատականն է,

x_i – տարածաշրջանում i – թղ ցուցանիշի արժեքն է,

$x_{i\min}, x_{i\max}$ – համապատասխանաբար x_i ցուցանիշի նվազագույն և առավելագույն արժեքներն են:

Երրորդ փուլը իրենից ներկայացնում է կայունության համալիր ցուցանիշի հաշվարկ ըստ խմբերի: Բացասական արժեքներից խուսափելու համար կիրառվել է միջին քառակուսային մեծությունից:

$$I_j = \sqrt{\frac{K_i^2}{n}}$$

որտեղ՝ I_j – ըստ յուրաքանչյուր խումբ ցուցանիշների կայունության համալիր ցուցանիշն է:

Չորրորդ փուլը ընդհանուր ցուցանիշի ձևավորումն է: Այս փուլում շատ կարևոր է տարածաշրջանի ագրարային ոլորտի կայուն զարգացման ընդհանրական ինդեքսի կառուցման ձևի ընտրությունը:

Տ.Վ. Ուսկովայի կարծիքով, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական համակարգի ընտրված յուրաքանչյուր բաղադրիչների նշանակալիության արտացոլման համաչափությանն առավելապես համապատասխանում է միջին երկրաչափական մեծությունը: Յուրաքանչյուր մասնավոր ցուցիչի փոփոխությունը հանգեցնում է ընդհանրական ցուցանիշի նշանակության մոդելավորմանը և արձանագրում է տարածաշրջանի կայուն վիճակի փոփոխությունը:

Կայունության ընդհանրական ինդեքսը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի միջոցով²

² Ускова Т. В. Управление устойчивым развитием региона. Монография, стр. 100, Вологда 2009г.

$$I_{ycm} = \sqrt[3]{I_{\text{экоH}} \cdot I_{\text{социал}} \cdot I_{\text{эколог}}}$$

որտեղ՝ $I_{\text{экоH}}$ - տնտեսական կայունությունն է

$I_{\text{социал}}$ - սոցիալական կայունությունն է

$I_{\text{эколог}}$ - էկոլոգիական կայունությունն է:

Ցուցանիշի կառուցումը թույլ է տալիս արտացոլել սոցիալ-տնտեսական և էկոլոգիական համակարգի ընտրված յուրաքանչյուր բաղադրիչների նշանակալիությունը: Յուրաքանչյուր մասնավոր ցուցիչի փոփոխությունը հանգեցնում է ընդհանրական ցուցանիշի փոփոխության և արժանագրում է տարածաշրջանի ագրարային ոլորտի կայունությունը:

Հինգերեդ փուլը՝ տարածաշրջանային ագրարային ոլորտի զարգացման կայունության ընդհանրական ցուցանիշի մեկնաբանումն է: Դրա համար անհրաժեշտ է սահմանել կայունության ինդեքսի շեմային նշանակություններ, որոնք կարող են տատանվել 0-ից 1 սահմաններում: Հետևաբար, կարելի է առանձնացնել տարածաշրջանի ագրարային ոլորտի կայունության հինգ մակարդակներ (տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Տարածաշրջանային ագրարային ոլորտի զարգացման կայունության ընդհանրական ինդեքսի սահմանային նշանակությունների մեկնաբանությունները

Կայունության մակարդակ	Ցուցիչի միջակայքի սահմանները	Կայունության աստիճան
1	$0.8 < I_{ycm} < 1.0$	Կայունության բարձր մակարդակ
2	$0.6 < I_{ycm} < 0.8$	Կայուն զարգացում
3	$0.4 < I_{ycm} < 0.6$	Կայունությանը մոտ զարգացում
4	$0.2 < I_{ycm} < 0.4$	Անկայունություն
5	$0 < I_{ycm} < 0.2$	Ճգնաժամային իրավիճակ

Մշակված մեթոդը թույլ է տալիս ստանալ տարածաշրջանի ագրարային ոլորտի զարգացման կայունության հարաբերական գնահատականը՝ արտացոլելով նրա տեղը՝ տարածաշրջանների ամբողջության մեջ:

АННОТАЦИЯ

Манук Мовсисян, к. э. н., доцент

МЕТОДИКА ОЦЕНКИ УСТОЙЧИВОСТИ РАЗВИТИЯ РЕГИОНАЛЬНОЙ АГРАРНОЙ СФЕРЫ

Ключевые слова – аграрная сфера, индикатор, интегральный индекс, оценка, регион, социальная устойчивость, устойчивое развитие, экономическ

Данная статья посвящена методике оценки устойчивости развития региональной аграрной сферы. В работе определены этапы оценки, указаны индикаторы, характеризующие устойчивость развития аграрной сферы региона. Представлена методика построения обобщающего показателя (интегрированного индекса) устойчивости развития. В статье установлены пороговые значения интегрального индекса региональной аграрной сферы.

ANNOTATION

Manuk Movsisyan, PhD

METHODOLOGY OF ASSESSMENT OF THE DEVELOPMENT SUSTAINABILITY IN THE REGIONAL AGRARIAN SECTOR

Keywords – agrarian sphere, indicator, integral index, assessment, region, social sustainability, sustainable development, economic sustainability, environmental sustainability

This article is devoted to the methodology of assessing of the sustainable development of the regional agrarian sector. The author defines the stages of the development sustainability assessment in the regional agrarian sector and states the signs typical for the sustainable development of the agrarian industry of the region. The article presents the methodology for building of the summarizing indicator (integral index) of the development sustainability of the regional agrarian sphere. The thresholds values of the integral index for the development sustainability of the regional agrarian industry are set.